## ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆԱՑ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԳԱՆՁԱՐԱՆ

«Մշակ»-ի տարւոյս համարներից մէկում «քահանայ» ստորագրութեամբ մի յօդուած կարդացինք յիշեալ գանձարանի մասին վերջերս կայացած ընտրութեանց առթիւ, ուր շատ բան կար ասուած, որոնք մեզ ամենեւին չեն հետաքրքրում. մենք կամենում ենք ընթերցողի ուշադրութիւնը հրաւիրել յօդուածի այն կէտի վերայ, ուր հեղինակը դժբաղդութիւն է գուշակում գանձարանի համար. նա ասում է, որ մի խումբ մարդիկ, ընտրութիւններ կատարելով, ի նկատի ունին գանձարանը փակել և դրամները բաժանել։

Արդ՝ մեզ հաղորդում են հաստատ աղբիւրներից, որ այդ գուշակութիւնները միանգամայն հիմք չունին և յօդուածագրի երեւակայութեան ծնունդ են. ոչ ոք գանձարանը փ ա կ ե լ ո ւ դիտաւորութիւնը չէ ունեցել և եթէ պիտի փակէին, էլ ինչու՞ էին ընտրութեանց մասնակցում և վարչութիւն կազմակերպում։

Վարչութեան ժողովը կայացաւ երկու նուագ. առաջին քուէարկութեանը 14 ձայնով ընդդէմ 3-ի վարչութեան անդամ ընտրուեցաւ միմիայն տ. Գիւտ ա. ք. Աղանեանց, իսկ հետեւեալ 5 քուէարկութեանց ժամանակ ընտրուեցան վարչութեան միւս անդամներ՝ արժ. հ. հ. Յովհաննէս ք. տէր Գրիգորեանց, Գրիգորիս ք. Մատինեանց, Գէորգ ա. ք. Աբուլեանց և Գրիգոր ք. Խօջաէնիաթեանց. իսկ գանձապահ հ. Յովհաննէս ք. Իւզբաշեանց։

Ո՞ւր մնաց արդեօք ընտրութեանց շարունակութիւնը։

---

## ԸՆՏԻՐ ՄՏՔԵՐ

Ժամանակը միայն դատարկ տարածութիւն է, որին բովանդակութիւն են շնորհում դէպքերը, մտքերը և զգացմունքները։ Վ ի լ. Հ ու մ բ ո լ դ տ.

—

Մարդկանց լեզուները ոչ մի իշխանութեամբ չի կարելի շղթայել։ Ս ա ա դ ի.

—